

ԿԱՐԾԻՔ

Ավետ Սուրենի Ավետիսյանի

«Վասպուրականի մանրանկարչության ոճա-պատկերագրական առանձնահատկություններն ըստ Հովհաննես Խիզանցու, Զաքարիա Ավանցու և Մեսրոպ Խիզանցու ստեղծագործությունների (ԺԴ դարի վերջ – ԺԷ դարի առաջին կես)» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված ԺԷ.

00.03- «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ արվեստագիտության գիտական աստիճանի հայցման համար

Աշխատանքի հիմնական շրջանը 14-18-րդ դարերի Վասպուրականի մանրանկարչությունն է: Հայ մանրանկարչության մասին կատարվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնց հիմնական մասը պատկանում են Վասպուրականի մանրանկարչության լավագույն գիտակ Հրավարդ Հակոբյանին, ով հիշյալ ատենախոսության ղեկավարն է:

Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է Վասպուրականի Խիզանցավորի 14-15-րդ դարերի՝ Հովհաննես Խիզանցու արվեստին: Այդ վարպետի յուրահատկությունն այն է, որ նա ձեռագրի առաջին թերթերը նվիրում է տերունական մանրանկարներին, և ապա խորաններին: Ի տարբերություն ընդունված պատկերաշարքի նա ծրագրերը սկսում է ոչ թե խորաններից, այլ տերունական մանրանկարներից, որոնց հաջորդում են խորանները:

Աշխատության երկրորդ գլուխը նվիրված է 1600թ. Ավետարանի (Մատենադարան ձեռ. հմր. 2804) Զաքարիա Ավանցու մանրանկարներին:

Նշվում է, որ Զաքարիա նկարիչն արդեն համատեղում է խորքային պատկերը հարթապատկերի հետ:

Նշվում է ձեռագրի կազմը, ինչը մոտ է կիլիկյան կազմին, որը հայկական արվեստի վրա ազդում է եվրոպական կաթոլիկ պատկերներով:

Եվրոպական օրիգինալ է, որ ինչպես նշում է հեղինակը, Զաքարիա Ավանցին Հիսուսի կրծքին մազեր է նկարում, հետաքրքիր է, որ պատկերի տակ վարպետը

թողնում է մեկնողական բացատրագրեր, ինչպես նաև հետաքրքիր են խորանները:

Գլուխ երրորդ՝ «Վասպուրականի մանրանկարչությունը ԺԷ դարի առաջին կեսին. Մեսրոպ Խիզանցի» գլուխը նվիրված է Վասպուրականի մանրանկարիչ Մեսրոպ դպիր Խիզանցուն: Հետաքրքիր է, որ նա ձեռագրեր է ստեղծել Սպահանում: Ատենախոսը հատուկ ուշադրություն է նվիրում կոմպոզիցիային, որը պակաս կարևոր չէ: Բավական հետաքրքիր է Հուդայի կերպարի մեկնաբանությունը: Հեղինակը նշում է, որ Հուդան պատկերված է ոչ թե իբրև դավաճան, այլ զղջացող: Սա կարևոր դիտողություն է, որ հեղինակը նկատել է:

Զաքարիա Ավանցու (Մատենադարան ձեռ. հմր. 2804) ձեռագիրը, ինչպես նկատում է հեղինակը, եզակի է իր ժամանակի համար: Նա կարծես ճանապարհ է բացում իր նորարարություններով հետագայի համար: Կարևոր դիտողություն է, որ Մեսրոպ Խիզանցու «Սուրբ Ծաղիկ» Ավետարանը դիտարկվում է որպես բացառիկ օրինակ իր եզակի պատկերագրական և խորհրդաբանական լուծումներով:

Եզրակացություններում հեղինակն ամփոփում է ատենախոսության գլխավոր ձեռքբերումներին որոշ դիտողություններ ավելացնելով:

Ըստ ատենախոսի, ուսումնասիրված ձեռագրերի մանրանկարները որոշակի շարունակելով Վասպուրականի մանրանկարչության ավանդույթները՝ հանդես են բերում նաև բավական ճշգրիտ նորարարական մոտեցում: Նրա աշխատությունը կարծես շարունակություն լինի Հրավարդ Հակոբյանի Վասպուրականի մանրանկարչությանը նվիրված աշխատությանը:

Բնականաբար ատենախոսությունը նորություն է առաջադրում հայ մանրանկարչության ավարտական փուլի մասին, ուստի անհրաժեշտ ուսումնասիրություն է՝ նվիրված հայ միջնադարյան մանրանկարչության ավարտին:

Հեղինակը հաջողությամբ շարունակում է Հրավարդ Հակոբյանի աշխատությունները Վասպուրականի դպրոցի նոր և յուրահատուկ շարունակության մասին ավելի ուշ ժամանակներում և այլ միջավայրում, լրացնում է յուրովի հայ մանրանկարչության մասին աշխատությունների թողած պակասը և արժանի է հաստատվելու իր թարմությամբ և մի կարևոր դպրոցի բացահայտման առումով:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված ձեռագիր մատյանների ցանկից, 123 անվանումով հայ և օտար գրականության ցանկից և առանձին հավելվածով ներկայացված 24 վերատպություններից, որոնք վերաբերում են ուսումնասիրվող նյութին:

Այն ավարտվում է նաև անգլերեն և ռուսերեն ամփոփագրերով:

Կատարված է ծավալուն աշխատանք և արժեքավոր ուսումնասիրություններ, որոնք հետագայում կարող են օգնել նոր սերունդներին որպես հետազոտության նյութեր:

Ավետ Ավետիսյանի թեկնածուական ատենախոսությունը կարելի է համարել կայացած գիտական աշխատություն, սակայն այն զերծ չէ նաև թերություններից, որոնցից պետք է նշել հետևյալները.

- ✓ Ցանկալի կլիներ, որ որոշ չափով աշխատանքում ուսումնասիրված նկարիչների ստեղծագործությունների ոճն ու սկզբունքները համեմատվեին նույն ժամանակաշրջանի եվրոպացի վարպետների հետ, ոչ թե լավի ու վատի գնահատման տեսանկյունից, այլ ոճական տարբերությունների առումով:
- ✓ Աշխատանքում նկատվել են նաև տեխնիկական բացթողումներ՝ ցանկալի էր, որ ատենախոսը գրականության ներկայացման ժամանակ ընդուներ որոշակի գրելաձև, օրինակ՝ 63, 64, 67, 96 գրականությունների մեջ նշված է «Հրատ.», իսկ 62, 65, 66, 71, 74, 92 և այլն՝ «Հրատարակչություն» բառը: նաև առկա են ոչ հստակ շարադասությամբ նախադասություններ և տառերի բացթողումներ:

Ավետ Սուրենի Ավետիսյանի «Վասպուրականի մանրանկարչության ոճապատկերագրական առանձնահատկություններն ըստ Հովհաննես Խիզանցու, Զաքարիա Ավանցու և Մեսրոպ Խիզանցու ստեղծագործությունների (ԺԴ դարի վերջ – ԺԷ դարի առաջին կես)» թեմայով ատենախոսությունն իր գիտական պատշաճ մակարդակով լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի՝ «գիտության տվյալ

բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում» պայմանին, իսկ
ատենախոսը միանգամայն արժանի է ժԷ. 00.03- «Կերպարվեստ, դեկորատիվ և
կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտության գծով արվեստագիտության
թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը, և գիտական արժեքից բացի ունի
նաև կարևոր նշանակություն, ինչի համար էլ միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ Արվեստի
ինստիտուտի 016 մասնագիտական խորհրդի հարգարժան անդամներին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,

արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝



Վիգեն Ղազարյան

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ
թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիգեն Ղազարյանի
ստորագրությունը վավերացնում եմ՝

Արվեստագիտության 016 մասնագիտական խորհրդի գիտքարտուղար՝

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ,

արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝



Աննա ԱՍԱՏՐՅԱՆ

17. 06. 2021թ.